

ՏԿԱԻ նախարար Արմեն Երիցյանն այցելեց Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնք

12.02.2015

Շուտով ծաղկահովիտցիները նոր բնակարաններ կունենան

Փետրվարի 12-ին ՀՀ ՏԿԱԻ նախարար Արմեն Երիցյանն այցելեց Ծաղկահովիտ համայնք: Համայնքի գյուղապետարանում նախարարը խորհրդակցություն հրավիրեց, որին մասնակցում էին Արագածոտնի մարզպետ Սարգիս Սահակյանը, համայնքի ղեկավար Երվանդ Խաչատրյանը և համայնքի ներկայացուցիչներ:

Խորհրդակցության ընթացքում նախարար Արմեն Երիցյանը լսեց համայնքի առաջնային խնդիրները, որոնք հիմնականում ընդգրկում էին ջրամատակարարման, աղբահանության, կոյուղային համակարգի բարելավման և համայնքի խոցելի խավերին բնակարաններով ապահովելու հարցերը:

Խորհրդակցությունից հետո Ա. Երիցյանը ծանոթացավ մոտ ապագայում Ծաղկահովիտում շահագործման հանձնվելիք բազմաբնակարան շենքին: Նորակառույց շենքը բաղկացած է 40 լուսավոր, ջեռուցման համակարգով ապահովված, ընդարձակ ու հարմարավետ բնակարաններից և նախատեսված է երկրաշարժից տուժած անօթևանների և այլ կարիքավորների համար: Շինությունը կառուցվել է պետական միջոցներով:

Բնակարանների բաշխման նպատակով ՀՀ վարչապետի հանձնարարականով ստեղծվել է միջգերատեսչական հանձնաժողով՝ քաղաքաշինության փոխնախարար Արմեն Ղուլարյանի գլխավորությամբ: Հանձնաժողովում ընդգրկված են քաղաքաշինության, տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությունների, Արագածոտնի մարզպետարանի և անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ներկայացուցիչներ: